

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅ-ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 10-ՐԴ ՆԻՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀՈՒՇԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<p align="center">ՄԻՋՈՑԱՌՈՒՄ (Հուշագրով ամրագրված դրույթ)</p>	<p align="center">ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ</p>	<p align="center">ՀԱՆՁՆԱՐԱՐԿԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔ/ ՉԿԱՏԱՐՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ</p>
<p>ՀՀ Սյունիքի մարզի և Բելառուսի Հանրապետության Մինսկի մարզի միջև գոյություն ունեցող առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակույթի բնագավառներում բարեկամական և փոխշահավետ տնտեսական կապերի ամրապնդում և համագործակցության հետագա զարգացում</p>	<p>ՀՀ Սյունիքի մարզպետարան</p>	<p>2013թ. սեպտեմբերի 16-ին Բելառուսի Հանրապետության Մինսկի մարզի պատվիրակությունը՝ ԲՀ Մինսկի մարզի նահանգապետ Բորիս Բատուրայի գլխավորությամբ այցելեց ՀՀ Սյունիքի մարզ: Քննարկվեցին առևտրա-տնտեսական, գիտա-տեխնիկական և մշակութային ծրագրեր, ինչպես նաև համատեղ նախագծերի իրականացման, արտահանման ծավալների ավելացման և երկկողմ համագործակցության ամրապնդման հետ կապված այլ հարցեր: 2014թ. առաջին կիսամյակում նախատեսվում է փոխադարձ այցելություն Բելառուսի Հանրապետության Մինսկի մարզ:</p>